ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 14-ը օգոստոսի 2017թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուխտյան,

ՀՀ ՋՈՒ ԱՀՏԱ վարչության ԲՀԱ բաժնի ԲՀԱ ղեկավարման բաժանմունքի ավագ սպա, փոխգնդապետ Ս. Թորոսյան

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Մասնակիցների՝ շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգում «Մաքս պրինտ» ՍՊԸ-ի կողմից հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված ապրանքի նկարագրի N 6.1 հավելվածի աղյուսակի «Ապրանքային նշան» դաշտը լրացված չէ, իսկ «Տեխնիկական բնութագրեր» դաշտը լրացված է թերի՝ ապրանքի տեխնիկական բնութագիրը հստակ չէ և գնահատող հանձնաժողովը գնահատելու հնարավորությունից զրկված է: Միաժամանակ ներկայացված հայտում բացակայում է հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետի 3.1 ենթակետի 2-րդ պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը (հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը): Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող

հանձնաժողովը նիստը մեկ օրով կասեցրել է և մասնակցին առաջարկել շտկել անհամապատասխանությունները: «Մաքս պրինտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը և նիստը շարունակվել է:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

1.2 17.08.2017թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց ««Մաքս պրինտ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի իրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/7» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Ս. Թորոսյան

Գնահատող Ա. Հակոբյան

Գնահատող Գ. Ուխտյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Ա. Ամիրյան